ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2012թ. թիվ 273-Ա

«ԱԽԹԱԼԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՓԲԸ-Ի ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի 28.11.2012թ. թիվ 02/23.4/17239-12 գրությունը, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը նվազեցնել՝ սահմանելով 17600000 դրամ, որը կազմում է 1760 սովորական անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10000 դրամ անվանական արժեքով:

2. ՀՀ Լոռու մարզպետի 2003թ. օգոստոսի 8-ի թիվ 220-Ա որոշմամբ հաստատված «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը 17600000 դրամ է, որը կազմում է 1760 սովորական անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10000 դրամ անվանական արժեքով:

Բոլոր 1760 սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, որի անունից բաժնետոմսերի կառավարման իրավասությունները իրականացնում է Հիմնադիրը:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը սովորական են:»

3. «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրեն Կ.Ազարյանին՝

«Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տարածքային բաժին՝ գրանցման:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 18
ք.Վանաձոր